Հաստատում եմ

ԵԳՊԱ ռեկտոր

_____ Ա. Է. Իսաբեկյան

« 15 » 01 _____ 2016թ.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն ընթացակարգի համար հիմք է հանդիսացել ԵԳՊԱ 2015թ.-ին ընդունված գնահատման համակարգը:
2. Սույն ընթացակարգը տարածվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում իրականացվող բոլոր մասնագիտություններով սովորող ուսանողների վրա:
2. ԵԳՊԱ-ում քննությունները կազմակերպվում են յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ հաստատված ժամանակացույցի համապատասխան (ուսումնական պլանով նախատեսված ժամկետում):

II. ԵԳՊԱ գնահատման համակարգը

3. Քննություններն ու ստուգարքները գնահատվում են ըստ ԵԳՊԱ 2015թ.-ին ընդունված գնահատման համակարգի:
4. Ուսանողի գիտելիքները գնահատվում են հետևյալ 2 բաղադրիչներով.
   - ✓ Ընդհանրական ու մասնագիտական գիտելիք և ըմբռնում:
   - ✓ Մասնագիտական կիրառական, ինչպես նաև փոխանցելի և փոխկիրառելի կարողություններ:
5. Ուսումանական պլանի համաձայն յուրաքանչյուր առարկա գնահատվում է համապատասխան տոկոսային հարաբերությամբ: Տվյալները լրացվում են տեղեկագրում, որից հետո մուտքագրվում են ուսանողների գնահատման տեղեկատվական համակարգում: Այնուհետև յուրաքանչյուր ուսանողի 2 բաղադրիչների արդյունքների հիման վրա կատարվում է հետևյալ հաշվարկը.
   - ✓ Յուրաքանչյուր բաղադրրիչ գնահատվում է:

- ✓ Յուրաքանչյուր գնահատված բաղադրիչ բազմապատկվում է արդեն հաստատված տոկոսային միավորով:
- ✓ 2 բաղադրիչներից ստացված միավորները գումարվում են և ստացվում է առարկայի գնահատված կշիռը (վերջնական արդյունքը):

III. ԵԳՊԱ գնահատման սանդղակը

Բալ	Գնահատական	Գնահատական (տառերով)	Մեկնաբանություն
10	4.0	A	Անցողիկ գնահատականներ
9	3.5	B	
8	3.0	C	
7	2.5	D	
6	2.0	E	
5		FX	Ոչ բավարար՝ ուսանողը որոշակի աշխատանքներ կատարելու և վերահանձնելու հնարավորություն ունի
5-ից ցածր		F	ԱՆԲԱՎԱՐԱՐ՝ ենթակա է դասընթացը կրկնելու

IV. Քննության արդյունքների բողոքարկումը

Ուսանողը կարող է բողոքարկել իր գնահատականը հայտարարելուց հետո մեկ օրվա ընթացքում: Գրավոր բողոքը ներկայացվում է ֆակուլտետի դեկանին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը կամ հաջորդ 3 օրերի ընթացքում:

Գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են .

1. Ֆակուլտետի դեկանը
2. Տվյալ առարկան մատուցող ամբիոնի վարիչը
3. Տվյալ առարկայի դասախոսը
4. Ուս. խորհրդի ներկայացուցիչը
5. Բողոքարկող ուսանողը:

Բողոքարկող ուսանողի ներկայությամբ.

1. Մասնագիտական առարկաների համար – քննարկվում է ներկայացված աշխատանքը/ները և կայացվում է համապատասխան որոշում,
2. Տեսական առարկաների համար – հանձնաժողովի ներկայությամբ կազմակերպվում է նոր քննություն:

Բողոքարկման արդյունքում, բաց քվեարկությամբ, հանձնաժողովի ձայների մեծամասնությամբ որոշվում է.

1. Գնահատականը թողնել անփոփոխ
2. Գնահատականը բարձրացնել

Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է տվյալ առարկայի տեղեկագրին: Տեղեկագրում կատարվում է փոփոխության մասին նշում: